

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՄԱԾՏՈՅՅԱՆ ԳՐԵՐԻ ԱՐԱՐՄԱՆ 1600-ԱՄՅՅԱԿԻՆ

ԴԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիրությունների թեկնածու

ԴԱԿՈԲ ՆԱՅԱՆ ՊԱՏՐԻԱՐքը՝ ԳՐՈՅ ԳՅՈՒՏԵ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՍԻՆ

Այրն այն հիմուր և խոհական,
Ծանօթ գրեանց կենտունական,
Այլ և տառից արդաքնական,
Տերաշնորհ գերբնադրական,
Բարոն Յակոբ այր վեհաքան,
Որոյ հոչակն է ազգն հաւայն¹:

Այսպես է գնահատում Հակոբ Նալլան Պատրիարքին (1706-1764 թթ.) նրա անանուն ժամանակակիցը: Տողեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ ցոլանում է մեծանուն եկեղեցականի, բազմաշխատ մատենագրի արժեքն ու արժանիքը: Նա մենքն էր ԺԸ դարի այն եկեղեցական գործիչներից, ովքեր քաջ գիտակցում էին գիտության, գրականության, մշակությի կարևոր դերը հայոց ազգային Ակարագրի, հասարակության բարոյական սկզբունքների պահպանման մեջ: Միիթաք Սերաստացու, Գրիգոր Շիրվանցու, Հովհաննես Բաղիշեցու և այլոց հետ նա ջանք չէր խնայում ազգային-եկեղեցական արժեքները, դարերի ընթացքում Եկեղեցու ամբարած հոգևոր, վարդապետական հարուստ փորձառությունն ի սպաս դնել ազգային ուժերի համախմբումին, «հայոց ընդհանուր վերանորոգության շարժմանը»²:

Այս հպատակին են հետամուտ նրա բազմարովանդակ ու բազմաբնույթ երկերը (սուրբգրային մեկնություններ, լուծմունքներ, աստվածաբանական, փիլիսոփայական աշխատություններ, քարոզներ, բանաստեղծություններ և այլն): Նրա թողած ծովածավալ ժառանգության մեջ ուրույն տեղ են զբաղեցնում քարոզները: Հասցեագրված լինելով հասարակության լայն խավերին՝ քարոզներն առավել անթաքուց կերպով են արտահայտում ազգային վերանորոգության զաղափարները:

Աստվածաշնչից, ազգային և ընդհանուր Եկեղեցու պատմությունից բերված օրինակներով Նալլան Պատրիարքը փորձում է բորբոքել ունկնդրի ազգային պատվախնդրությունը, հոգևոր, եկեղեցական արժեքների պանծացումով բարձրացնել նրա բարոյական ինքնազիտակցությունը: Այս ոգով և տրամադրությամբ են շարադրված նրա նշանավոր «Կիրակէից» քարոզները, որոնց թիվն անցնում է հարյուրից: Աստվածաշունչն ու աստվածաբանական նրին տեսությունները դրանց հաճախ ներհյուավում են ազգային պատմու-

¹ ՄՄ, ձեռ. 1016, թ. 320ա, հղումն ըստ՝ Շուշանիկ Նազարյան, Ողբի և սրափման բանափեղծություն, XVIII դ., Եր., 1992, լ. 51:

² Ը. Նազարյան, եղվ. աշխ., լ. 13:

թյան զանազան պարագաների հետ, որի շնորհիվ երկու տարրաբնույթ իրողություններ ձուլվում են իրար. ազգային արժեքները զգեստավորվում են աստվածաշնչային ոգեկանությամբ, իսկ աստվածաշնչային իրողություններն են Անրկայացվում են ազգային տարագի մեջ:

Ներշնչանքի տիրական ազդեցության տակ Սրբազնա հեղինակը հաճախ այդ արժեքների հարաբերության մեջ առավելությունը վերապահում է հայոց: Այսպես, հետևելով Կորյունի օրինակիմ³ Նայանը հրապարակվող քարոզում U. Մեսրոպի և U. Սահակի կատարած սկրանքը շատ ավելի բարձր է դասում, քան Մովսես Նախամարգարեի և 72 թարգմանիչների կատարածը, որովհետև թեմպես Մովսեսը հմտացավ եզիաւուկան զիտության մեջ և սերտեց նրանց այբուբենը, սակայն նա այնպես էլ մնաց լոկ օտար այրութեան սերտողը՝ չհագեցնելով իր ծարավը, մինչդեռ U. Մեսրոպը հագեցրեց բովանդակ ազգի հոգևոր ծարավը: Եթե Հին Կտակարանը հումարեն թարգմանվեց 72 «հոգելի այրերի» կողմից, մինչդեռ հայ ազգի պարագային U. Սահակը և U. Մեսրոպը երկուսով ի գորուեղան ընկալել Հին և Նոր Կտակարանները, «քանզի արագագիր դպրապետն լեզուի նոցաւը Հոգին Սուրբը»:

Այսօր ևս Նայան Պատրիարքի քարոզները կարող են բերել իրենց ոչ անկարևոր նպաստը կրոնական, ազգային ինքնազիտակցության բարձրացմանը: Այս տեսակետից ավելի քան բնութագրական է Հայոց գրին և Թարգմանչաց լուսեղեն փաղանցը զիխավորող U. Սահակին և U. Մեսրոպին Ավիրված քարոզը, որը և Անրկայացվում է ընթերցողներին:

³ Կորին, Վարք Մաշտոցի, աշխատ. Մանուկ Արևոյանի, Եր., 1981, լ. 100: